

ԱՐԱՐԱԿԱՆ ԾՈՑԻ ԵՐԿԻՐՆԵՐԸ
400 ՄԻԼԻՈՆ ՏՈՒՐ
ՊԻՏԻ ՈՒՂԱՐԿԵՆ

Արարական Ծոցի վեց երկիրներու էլեմուտքի եւ տնտեսութեան նախարարները երէկ գիշեր արտակարգ ժողով մը գումարեցին, որուն ընթացքին որոշեցին 400 միլիոն տոլար ուղարկել Թեհրան՝ Պամի երկրաշարժին պատճառով վնասներուն իրեն օժանդակութիւն:

(ԱՖՓ)

ԱԶՏԱԿ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՊԵՏՈՒԹՅԱՆ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE **ازتاک** جريدة يومية سياسية وأدبية - الدوة المسؤولة - إنشاء درويشيان

1500 Լ.Ո. 76ԳԴ ՏԱՐԻ, ԹԻԻ 236 (21578) ԵՐԵՎԱՆԻ, 30 ԳԵԿԵՏԵՄԵՐ 2003 10 ԷՁ

ԱՎԱՆՈՒՄԸ ԻՆՔՆԱՇԱՐԺԻ
ՊԱՅԹՈՒՄ ՌԻԱՏԻ ՄԷՁ

Երէկ գիշեր Մեհուական Արապիոյ մայրաքաղաք Ռիատի մէջ ակասուած ինքնաշարժի պայթում մը տեղի ունեցաւ: Աւելի ուշ յայտարարուեցաւ, որ ինքնաշարժը կը պատկանէր սէուտցի սպայի մը: Չեղբու եւ վնասներու մասին մինչեւ ուշ գիշեր ոչինչ հաղորդուեցաւ: Բացուած է հետաքննութիւն:

(ԱՖՓ)

ՆԱԽԱԳԱՂ ԼԱՅՈՒՏ ԵՒ ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆ ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ՏԵՂԱԿԱՆ ԵՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՅԱՐՑԵՐ



Նախագահ Վոր. Էմիլ Լաիուտ երէկ Պապատայի մէջ ընդունեց մարմնակրթութեան եւ երիտասարդութեան նախարար Սեպուի Յովնանեանը, որուն հետ քննարկեց տեղական եւ շրջանային նորագոյն իրադարձութիւնները, ինչպէս նաեւ նախարարութեան կապուած հարցեր:

Յետմիջօրէին, նախարար Յովնանեան այցելեց Պէյրութի Ամերիկեան հիւանդանոց, ուր կը գտնուին Քորոնուի օդանաւային արկածէն փրկուած վիրաւորները: Ան շուտափոյթ ապաքինում մաղթեց վիրաւորներուն:

ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՎԱԵՐԱՑՈՒՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ

Վրաստանի խորհրդարանը Դեկտեմբեր 26ին վաւերացուց Հայաստանի եւ Վրաստանի միջեւ կնքուած «բարեկամութիւն, համագործակցութիւն եւ փոխանվտանգութիւն» համաձայնագիրը: Երեսփոխան Վան Բայրուրդեանի համաձայն, համաձայնագիրին վաւերացումով նոր փուլ մը կը սկսի հայ-վրացական յարաբերութիւններուն մէջ:

Նշենք, որ Հայաստանի խորհրդարանը այս համաձայնագիրը վաւերացուցած էր Հոկտեմբեր 2003ին:

ԹԱՆԱԹ՝ ԸԻՄՍԻՍԱՅԻՆ ԿԻՊՐՈՍԻ ՎԱՐՉԱՊԵՏ

Թուրք կիպրացի ընդդիմադիր ղեկավար Մեհմէթ Ալի Թալաթ Երկուշաբթի օր յայտնեց, թէ ազգայնական ղեկավար Ռաուֆ Տենքթաշ զինքն չ'ընտրեց ի վարչապետ եւ իրեն յանձնած է Հիւսիսային Կիպրոսի մէջ նոր կառավարութիւն մը կազմելու պարտականութիւնը: Անդրադառնալով Եւրոպական Միութեան անդամակցութեան հարցին, Թալաթ ըստ, որ Մայիս 1ը անկիւնադարձային թուական մըն է իրենց համար: Հիւսիսային Կիպրոսի ինքնակոչ հանրապետութիւնը դուրս պիտի մնայ Եւրոպական Միութեանէն, եթէ երկու կողմերը մինչեւ Մայիս 1 չ'ստորագրեն կիպրոսի վերամիացման համաձայնագիր մը:

Ինքնակոչ հանրապետութեան սահմանադրութեան համաձայն, վարչապետը երկու շաբթուան ժամկէտ ունի նոր կառավարութիւն մը կազմելու:

ԻՐԱՆԻ ԵՐԿՐԱՇԱՐՄԻՆ ԶՈՀԵՐՈՒՆ ԹԻԸ ՀԵՏՁՀԵՏԷ ԿԸ ԲԱՐՉԱՐԱՆԱՅ




Մինչ Իրանի մէջ տեղի ունեցած երկրաշարժին պոհերուն թիւը պաշտօնապէս կը բարձրանար 30 հազարի, Իրանի նախագահ Մոհամէտ Խաթեմի եւ հոգեւոր գերագոյն պետ Այաթոլլա Ալի խամենէի այցելեցին աղէտին վայրը՝ Պամ: Իրանի պետական ծախսափութի կայանը հաղորդեց, որ 25 հազար դիակները արդէն թաղուած են: Միաժամանակ, աշխատանք կը տարւի հապարաւոր այլ դիակներ փնտրելու: Միւս կողմէ, ԵՈՒՆԻՍԷՖ Իրանի մէջ մէկ պաշտօնատարը ահապանգ հնչեցուց վերապրողներու առողջութեան սպառնացող վտանգներուն մասին՝ անդրադառնալով այն վատառողջ մթնոլորտին, որուն ենթակայ են անոնք:

Իրանի նախագահ Մոհամէտ Խաթեմի եւ քսի մը նախարարներ երէկ այցելեցին Պամ քննելու վնասին տարողութիւնը եւ փրկարար աշխատանքներու ընթացքը: Աղէտին վայրը քննելէ ետք, Խաթեմի հաստատեց, թէ ողբերգութեան տարողութիւնը շատ մեծ է միաժամանակ յոյս յայտնելով, որ ժամանակի ընթացքին յաւելալ օժանդակութիւն կը հասնի: Երէկ Պամ այցելեց նաեւ Իրանի հոգեւոր պետ Այաթոլլա Ալի խամենէի, որ ցաւակոյթի յայտնելով շրջանի բնակչութեան՝ խոստացաւ վերակառուցել Պամը, «աւելի զօրաւոր հիմքերու վրայ»:

ԻՐԱՆԸ ԿԱՍԿԱԾԵԼԻՆԵՐ ԿԸ ԶԵՐԲԱԿԱՎՈՒԻՆ ԴԱՇՆԱԿԻՑ ՈՒԺԵՐՈՒ ԿՈՂՄԷ

Իրաքի մէջ դաշնակից ուժերու լեհական մէկ ջոկատը երէկ ձեռքակալեց 4-5 կասկածելիներ՝ Շաբաթ օր Քարպայալի մէջ տեղի ունեցած յարձակումներուն գծով, մինչ ամերիկեան բանակը Հիւսիսային Իրաքի մէջ սպաննեց երեք կասկածելիներ, որոնք ենթադրաբար կապեր ունին արմատական «Ասսար Էլ Մալամ» խմբաւորումին հետ: Ընդհարումներուն ընթացքին վիրաւորուեցան երկու ամերիկացի զինուորներ: Մինչ Քարպայալի պայթումներուն շուրջ քննութիւնը կը շարունակուէր, յետմիջօրէին Պաշտօնապետ մէջ տեղի ունեցաւ զօրաւոր պայթում մը: Միւս կողմէ, ձափոն եւ Չինաստան դրական նկատեցին Իրաքի արտաքին պարտքը նուազեցնելու Միացեալ Նահանգներու փորձերը: Միացեալ Նահանգներու նախագահի ներկայացուցիչ ձեյմս Պէյքըրի Չինաստան գործողումէն ետք, Պէյքըրն յայտնեց, որ պիտի քննէ Իրաքի պարտքէն մեծ մաս մը ջնջելու կարելիութիւնը: Պէյքըր նախապէս կը գտնուէր Թոքթո, ուր վարչապետ ձունիչիթո Քոյլումի յայտնած էր, թէ ձափոն պատրաստ է ջնջելու Իրաքի պարտքերուն մեծ մասը, եթէ մնացեալ պարտատերերը նոյն քայլին դիմեն:

ԶՈՒՐԱԲ ԺՎԱՆԻԱ ԸԱՅԱՍՏԱՆԻ ՂԵՎԱԿԱՐՈՒԹԵԱՆ ԸՏՏ ԲՆՆԱՐԿԵՑ ԸԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԱՌՆՉՈՒՂ ԸԱՐՑԵՐ



Վրաստանի պետական նախարար, ինչպէս նաեւ նախկին նախագահ Էտուարտ Շեւարտնաձէն տապալած ընդդիմադիր ձախկանի ղեկավար Էտեալի անդամ Չուրաթ Ժվանիա երէկ Երեւանի մէջ հանդիպումներ ունեցաւ նախագահ Ռոպէրթ Քոչարեանի, վարչապետ Անդրանիկ Մարգարեանի, արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանի, խորհրդարանի նախագահ Արթուր Պաղտասարեանի, ինչպէս նաեւ բարձրաստիճան այլ պատասխանատուներու հետ:

Նախագահ Ռոպէրթ Քոչարեան Ժվանիայի հետ քննարկեց հայ-վրացական յարաբերութիւններուն առնչուող հարցեր: Ժվանիա նախագահին ներկայացուց Վրաստանի քաղաքական ներկայ իրավիճակը: Վարչապետ Անդրանիկ Մարգարեան ընդունեց Ժվանիան եւ անոր գլխաւորած պատուիրակութիւնը:

Ողջունելով հիւրերը, Մարգարեան նշեց, որ Հայաստան շահագրգռուած է դրացի Վրաստանի քաղաքական կայունութեամբ: Իսկ առեւտրական եւ տնտեսական կապերուն առնչուող հարցերուն մէջ ան շեշտը դրաւ յատկապէս Վրաստանի վրայով տարանցիկ փոխադրումներու սակագիններու քաղաքականութեան վերանայման խնդիրին վրայ: Մյուս հարցին կապակցութեամբ Ժվանիա նշեց, որ վրացական երկաթուղիի ղեկավարութիւնը փոխուած է, ստեղծուած է նոր խորհուրդ եւ հարցը կը գտնուի իր անձնական հսկողութեան տակ:

Հանդիպման ժամանակ կողմերը մեծ ուշադրութիւն յատկացուցին տարածաշրջանային խնդիրներուն, անդրադարձան նաեւ Ջաւախքի ու ջաւախքահայութեան խնդիրներուն: Ժվանիա նշեց, որ ինք յաւատեղեակ է հոն գոյութիւն ունեցող բոլոր խնդիրներուն եւ իր ներկայացուցած քաղաքական ուժը մեծ թիւով աջակիցներ ունի այդ շրջանին մէջ:

Ան աւելցուց, որ իր երկիրը չ'էպոք դիրքորոշում ունի Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման հարցին գծով:

Արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանի հետ հանդիպումին, Չուրաթ Ժվանիայի կ'ընկերակցէր Վրաստանի արտաքին գործոց նախարար Թեո Ջափարիձէ:

Շար.՝ Էջ 3

ՍԵՐՊԻԱ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ԴԻՐՔԻՆ ՎՐԱՅ

Սերպիոյ կեդրոնական ընտրական յանձնաժողովը երէկ յայտարարեց, որ նախնական արդիւնքներու համաձայն, Կիրակի օր տեղի ունեցած խորհրդարանական ընտրութիւններուն, քուէներու մեծամասնութիւնը հաւաքած է ազգայնական «Սերպիոյ Արմատական Կուսակցութիւն»ը, որուն ղեկավարը՝ Վոյսլավ Սեւեյլ պատերազմական ոճի գործած ըլլալու յանցանքով ամբաստանուած է եւ Լա Հէյի միջազգային ատենանիստի մէջ դատաւարուած է:

Սերպիոյ կեդրոնական ընտրական յանձնաժողովը երէկ յայտարարեց, որ նախնական արդիւնքներու համաձայն, Կիրակի օր տեղի ունեցած խորհրդարանական ընտրութիւններուն, քուէներու մեծամասնութիւնը հաւաքած է ազգայնական «Սերպիոյ Արմատական Կուսակցութիւն»ը, որուն ղեկավարը՝ Վոյսլավ Սեւեյլ պատերազմական ոճի գործած ըլլալու յանցանքով ամբաստանուած է եւ Լա Հէյի միջազգային ատենանիստի մէջ դատաւարուած է:

Քուէներու մեծամասնութիւնը հաւաքած կուսակցութիւնը առաջարկ ներկայացուց Սերպիոյ Ժողովրդավար Կուսակցութեան, որուն ղեկավարն է Եուկոլաիւիոյ նախկին նախագահ Վոյսլավ Քոչարեանի, որ միանալ իրեն՝ քաղաքական կառավարութիւն մը կազմելու համար: Վերջինս հաւաքած է քուէներուն 17,8 առ հարիւրը:

Նշենք, որ նախկին վարչապետ Չուրաթ Ժվանիայի Ժողովրդավար Կուսակցութիւնը ապահոված է քուէներուն 12,7 առ հարիւրը, իսկ այժմ Լա Հէյի բանտը գտնուող նախկին նախագահ Սլոպոյան Միլոշեւիչի Ընկերվարական Կուսակցութիւնը՝ 7,6 առ հարիւրը, ապահովելով խորհրդարանին մէջ 22 աթոռ ունենալու իրաւունքը:

Merry Christmas & Happy New Year
JACK GIFTS
Art Center: B.H. Municipality Street, Tel: 01 264 066
Gadgets: B.H. Municipality Street, Tel: 01 266 982
Cosmetics: B.H. Entrance Road, Facing Master Mall, Tel: 01 263 592
E-mail: jackgifts@dm.net.lb

AREV BOUTIQUE
Jal El Dib - Oscar Center
Tel: 04 715 170 - Fax: 04 713 397
Bourj hamimoud - Arine Center
Tel: 01 254 953/4
Arey@hotmail.com

Jeunesse
Elegance
Prestige
Art
PRES MUNICIPALITE DE BOURJ-HAMOUD, RUE TRIPOLI

CITIZEN
Eco-Drive
Light for life
Recharges under any light, needs no battery replacement, goes on forever
Only at: PONDUEL-TABARIS and authorized dealers for more information call: 01 240600

ԶՈՒՐԱԲ ԺՎԱՆԻԱ ԸՆՅԱՍՏԱՆԻ ԴԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԸԵՏ...

Շարունակում Ա. Էջեմ

Օսկանյան գոհունակությունն յայտնեց հայ-վրացական յարաբերությունները որակին և մակարդակին համար և շեշտեց, որ Երևանի մեջ այդ յարաբերությունները կր գնահատուին իրեն հարապակի կոմպլեքսի «փխրուն կայունության» պահպանման գրառական: Բաժնետիրական կողմին մատուցումները, ժխանի կարեւոր նկատեց երկկողմանի համագործակցության տնտեսական բաղադրիչը, որուն շուրջ երկուստեք համաձայնություն գոյացավ:

Չրոյցի ընթացքին կողմերը նաև կարծիքներ փոխանակեցին Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացին և հայ-թրքական ու վրաց-ուսական յարաբերությունները հեռանկարներուն շուրջ:

Այգային ժողովի նախագահ Արթուր Պաղտասարեան ևս ընդունեց Վրաստանի պետական նախարար Չուրաբ Ժվանիայի գլխավորած պատուիրակությունը: Հանդիպման մասնակցեցան երկու երկիրներու դեսպանները՝ Գեորգի Խոսրոբեր և Նիկոլոզ Նիկոլոզիչվիլին:

Հանդիպման ընթացքին քննարկուեցան միջպետական յարաբերություններու վարգացման հեռանկարները: Ժվանիա կարեւոր նկատեց միջխորհրդարանական յարաբերություններու վարգացումն ու ամրապնդումը՝ նշելով, որ նախագահական ընտրություններու նախօրեակին իր այցելությունը Հայաստան պայմանաւորում է այն մեծ նշանակութեամբ, որ վրաստանի համար ունին հայ-վրացական յարաբերությունները:

Արթուր Պաղտասարեան իր կարգին ընդգծեց հայ-վրացական յարաբերություններու վարգացումը, նշելով, որ Հայաստանի քաղաքական բոլոր ուժերը շահագրգռած են, որ վրաստանի մէջ կայունություն ու խաղաղություն հաստատուին:

Խորհրդարանի նախագահը կարեւոր նկատեց վրաստանի հայերուն ու յայտկապէս Ջաւախքի հիմնահարցերու նկատմամբ ուշադրությունը:

Համաձայնություն գոյացավ վրաստանի նախագահական ընտրություններու արարտէն ու իշխանութիւններու ձեւաւորումէն ետք հանդիպելու ու միջպետական յարաբերություններու որոշակի խնդիրները քննարկելու համար:

البيروت
السفر
الاستقبال
الضيافة
السفير

ԻՆՉ ԿԸ ԳԻՆԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

Պենինի մէջ պատահած օդանաւի արկածը եւ անոր քննարկումը 77 լիբանանցիներու դիմումներուն փոխադրուսանսն լիբանանեան օրաթերթերուն գլխաւոր լուրերը:

Այլ լուրերու կարգին, թերթերը լուսարձակի տակ առած են Սուրիոյ եւ Իսրայէլի միջեւ բանակցութիւնները վերականգնելու համար Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի դրած պայմանները եւ Միացեալ Նահանգներու մէջ ահաբեկչական արարքներու գծով մտավախութիւններուն:

ՊԵՆԻՆԻ ՕԳԱՆԱԻ ԱՐԿԱԾ ԵՒ ԳԻՆԵՆԵՐՈՒ ՓՈՆԱԿՐՈՒԹԻՒՆ

«Տիար» գրած է, թէ Պենինի օդանաւային արկածին ընթացքին պահանջներու դիմումները երկու գիշեր հասան Պէյրութի օդակայան եւ դիմաւորուեցան իշխանութեան երեք պետներուն կողմէ: Պենինի իշխանութիւնը կը մերժէ Լիբանանի մասնակցութիւնը արկածին շուրջ հետաքննութիւններուն: Տեղեկութիւններ շրջան կ'ընեն, թէ լիպիացի օդաչուի սպասարարն է Քոթոնի լիպիական դեսպանատունը:

«Անուար» նշած է, թէ Լիբանան մեծ վիշտով ընդունեց օդանաւի արկածին պոհերը:

Թերթին համաձայն, ճակատագրական օր մըն է հիւանդանոցներուն և Ընկերային Ապահովագրութեան Ազգային Ստուկին միջեւ հարցին և դասախօսներու խնդիրին գծով:

«Նահար»-ի համաձայն, պետութիւնը սուրբով ընդունեց 79 դազադներ: Նախագահներ, նախարարներ, երեսփոխաններ, կրօնապետներ և ժողովրդային հոծ բազմութիւն մը ընդունեց իրենց վերջին հանգիստին համար Պէյրութ ծամանած դիակները:

«Սաֆիր» գրած է, «Լիբանան ընդունեց «մահուան շքախումբը... Հարցումները տակաւին անպատասխան կը մնան»:

«Լիուս»-ի համաձայն, Լիբանան ընդունեց «մահուան շքախումբը... Հարցումները տակաւին անպատասխան կը մնան»:

ճայն, Լիբանան վերջին հրաժեշտը կու տայ իր պոհերուն եւ սուգի կը մատնէ 38 զինղեր եւ քաղաքներ: 77 լիբանանցիներու դիակներ հասան Պէյրութ եւ ընդունուեցան իշխանութեան երեք պետներուն կողմէ:

«Մուսաբալա» դիտել տուած է, թէ «Պոլինի 727» տիպի օդանաւը երեք շարժակ ունէր, արտօնուած բեռէն աւելի ծանրութիւն կը կրէր եւ ապահովութեան պայմանները չէր ամբողջացներ:

ԻՐԱՆԻ ԵՐԿՐԱԾԱՐԺԸ

«Անուար» գրած է, թէ երկրաշարժի պոհերուն թիւը բարձրացավ 30 հազարի եւ մտավախութիւններ կան, որ Թեհրան եւս մեծ աղէտի մատնուի:

Ըստ թերթին, Ռաշիկըն յայտարարած է, թէ Իրանի տրուած օժանդակութիւնը չի նշանակէր, որ քաղաքականութեան փոփոխութիւն եղած է:

«Տիար»-ի համաձայն, Պամի մէջ երկրաշարժէն վերապրողներ գտնելու յոյսերը գրեթէ կը չբանան: Մեռելներուն թիւը կ'անցնի 30 հազարի սահմանը, կաւերակներուն տակէն աւերելի եղած է հազար անմէր փրկել, իսկ ցարդ 15 հազար հոգի թաղուած է:

«Նահար» գրած է, թէ Պամի մէջ փրկարար աշխատանքները կը շարունակուին, սահայն ողջեր գտնելը հրաշքի համապօր դարձած է:

Ըստ թերթին, 23 տարիէ ի վեր առաջին անգամ ըլլալով ամերիկացի պիւտրներ Իրան կը մտնեն երկրաշարժէն վնասուածներուն օժանդակութիւն հասցնելու միտումով:

«Սաֆիր»-ի համաձայն, Պամի մէջ յոյսի վերջին նշոյնները եւս կը մարին եւ իրանեան շերմ տրամադրութիւն կը տիրէ ամերիկացի փրկարար խումբերուն օժանդակութեան նկատմամբ:

«Մուսաբալա» նշած է, թէ ամերիկեան իրանեան բանակցութիւններ ծայր առած են փրկարար աշխատանքները:

ները համադրելու համար:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՅԼ ԼՈՒՐԵՐ

«Տիար» նշած է, թէ Բրիտանիա իր քաղաքացիները կը պոհուցանէ Սէնտալան Արաբիոյ վրայ գործադրուելիք մատուցուող յարձակումներէ:

Ըստ թերթին, տեղեկութիւններ շրջան կ'ընեն օդանաւային ահաբեկչական արարքներու ծրարումին մասին: Ռաշիկընի ատաւելագոյն նախագործացումներու կը դիմէ ապահովութեան պահպանման համար, որով հետեւ մտավախութիւններ կան, որ «Քալիտա»-ի հետեւորդները Նոր Տարուան գիշերը գործողութիւն մը կատարեն:

Իրաքեան իրադարձութիւններուն մասին խօսելով «Անուար» օրաթերթը գրած է, թէ երկու ամերիկացի պիւտրներ սպանուեցան եւ 8 ուրիշներ վիրաւորուեցան Ֆայումի մէջ ամերիկացի պիւտրներուն դէմ գործադրուած յարձակումին հետեւանքով:

«Նահար»-ի համաձայն, Շարէի դիտել տուած է, թէ Սուրիոյ եւ Իսրայէլի միջեւ բանակցութիւնները պէտք է սկսին վերոյնէ:

Թերթը դիտել տուած է, թէ Իրաքի մէջ ամերիկեան կորուստները կը կրկնապատկուին եւ ցարդ մահացած պիւտրներուն թիւը կը հասնի 470ի, իսկ վիրաւորներունը՝ 233ի:

Պաղեստինեան տագնապին մասին խօսելով «Նահար» նշած է, թէ պաղեստինեան շրջաններուն մէջ ցուցեր ծայր առած են Քոթեյ - Շարուն հանդիպումին դէմ:

«Մուսաբալա»-ի համաձայն, Շարէի Ռաշիկընը կը իրաւորէ շրջանը ապապիսելու աշխատանքներուն պօրակցելու:

«Լիուս» գրած է, թէ պաղեստինեան իշխանութիւնը պաշտօնապէս ներդրութիւն խնդրեց Մահէրէն, իսկ Սէյման անգամ մը եւս Ռամալա պիտի ուղղուի:

Mini Market
CHEZ VICKEN
All kinds of canned foods
Fresh cheese, Drinks, etc...
Buy with 10.000 L.L. Get a Lottery.
Bouff hamoud, Facing AFED, Tel.: 03/360632

G. AYANIAN & SONS
MERRY CHRISTMAS
We Light up LEBANON Since 1928
Dora: 01/255222 / 3 / 4 / 5
Gemmayze: 01/447000 - 01/447940
Fax: 01/265187 - 01/582357
Cell.: 03/627728 / 9
www.ayanian.com

galerie
PIERROT
Specialiste de Meubles D'enfants de 0 à 20 ans
galerie
PIERROT
Liste de Naissance et de Bâpteme
Autostrade Jal-el-Dib - Tel : 04 / 713233 - 03 / 701607

«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»-Ի ԱՅՍՕՐՈՒՆՆ 3ԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ
8:30 Լիբանանեան մամուլի խորհրդարանի ընթերցում արարքերէն
8:45 «Աստղեր»
9:40 «Օրուան տոմար»
10:45 «Իճպալ կը սօցնէ» արարքերու հիւրը եւ Գալաթի Սիշի Ֆարաուս
11:30 Լիբանանեան մամուլի խորհրդարանի ընթերցում հայերէն
1:30 Կայստանեան Լուրեր
3:00 «Իճպալ կը սօցնէ» (կրկնութիւն)
3:10 Արարքերէն յայտագիր
Մարիտա Ֆարաուս կը խօսի «Շիյա» պատկերասփիւռի կայանէ սփռուող իր «Այամաբըլ» յայտագիրին մասին
6:50 «Օրուան տոմար» (կրկնութիւն)
7:05 «Իճպալ կը սօցնէ» (կրկնութիւն)
8:00 «Դալար բարտի» հայերէն հարազատ երգի մատուցում

ՄՈՆԻՏՐԱԿ ԿԱՆԱՅ ՍՓՈՐ
Նոր յայտագիրներու ծիրին մէջ 1 Յունուար 2004էն սկսեալ «Վանայ Զայն»-էն շարքապակի երթականութեամբ պիտի ձայնարարուի «ՄՈՆԻՏՐԱԿ ԿԱՆԱՅ ՍՓՈՐ»-ի համար: ՄՈՆԻՏՐԱԿ, որուն մասնակցները Մոնտիալի դրութեամբ պիտի մրցին իրար դէմ եւ վերջաւորութեամբ առաջին երեք դիրքերը գրաւողները պիտի ստանան արժեքաւոր մուրհակներ:

Անոնք, որոնք կը փափաքին մասնակցի այս մրցանքին, պէտք է որ մինչեւ Երեքշաբթի, 30 Դեկտեմբեր 2003 հեռաձայնէն «Վանայ Զայն»՝ 01-267657 եւ 01-241199 թիւերուն, արձանագրուելով քարտուղարութեան մօտ:

ԱՃԱՊԱՐԵՅԵՐ ԵՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵՅԵՐ «ՄՈՆԻՏՐԱԿ ԿԱՆԱՅ ՍՓՈՐ»-ԻՆ

ՃԱՇԱՐԱՆ SHAMS ԱՅՆՃԱՐ
ՆՈՐ ՏԱՐՈՒՄԱՆ ԳԻՇԵՐԸ ԱՅՈՒՅԵՐ ԽԱՆԴԱԿԱՌ ԵՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՄՅՆՈՒՐՏԻ ՄԵՋ
• Արաբական, հայկական եւ եւրոպական ճոխ յայտագիր
Մասնակցութեամբ՝ հանրածանօթ երգիչներու
• Բաց աղանդեր, ձաշ, խմիչք, ուիսքի կամ օդի, «Պիւշ տը Նուլ» եւ քոթիյոն:
Սակ՝ 20\$
ԾԱՆՕԹ: Կը խնդրուի սեղաններու վերապահման համար կանխօրոյր դիմել
հեռ. 08-620567:

HAUTE COIFFURE FRANÇAISE
Georgig Balian
Visagiste Silva Karadaghlian
Zalka, Grand Park II Tel: 04 72 04 04 - 72 06 06

Sweet Life
Wedding
Engagement
Baptism
Orientales Et Occidentales
Receptions Et Cocktails
Sweet Life
For Happy Occasions
Bouff Hamoud - Municipality street Tel: 01/268041 - 03/366306 - 01/556161

TOGETHER WE ARE STRONGER
ՄԻԱՍԻՆ ԱԲԵԼԻ ԶՕՐԱԴՈՐ ԵՆՔ
ԱՅՏԻՒԼ AFHIL
Armenian Mutual Fund
Tel / Fax: 01 242556 - 242557

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՄՈՒԼԻ ՀԱՄԱՐ

Ս. թ. Գեկտեմբերի 27-ին Սիրիայի Արաբական Հանրապետության Գազա հատվածի Պաշտպանության հրամանագրով օտարերկրեայ քաղաքացիներին տրուող ՍԱՀ պետական բարձրագույն պարգևի գերագույն կարգի «Գնահատանքի» շքանշան շնորհույց Սիրիայում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Լեւոն Սարգսեանին: Այս կապակցությամբ ՍԱՀ արտգործնախարարության կողմից դեսպան Լ. Սարգսեանի պատիվը կազմակերպում միջոցառմանը ներկայ էին Սիրիայի արտգործնախարարության բարձրաստիճան պաշտոնեաներ, Սիրիայում հաւատարմագրված դեսպաններ, այլ պաշտոնատար անձինք:

Ծնորհատրական խօսքով հանդես եկավ ՍԱՀ փոխարտգործնախարար Ռալիտ Մուալիմը: Նա բարձր գնահատեց Սիրիայում դիւանագիտական երկարամեյ գործունէութեան ընթացքում Լ. Սարգսեանի անբասիր և պարտաճանաչ աշխատանքը շնորհակալութիւն յայտնելով արդիւնաւէտ համագործակցութեան համար: Ու. Մուալիմը ընդգծեց, որ ՍԱՀ «Գնահատանքի» շքանշանը տրուում է օտարերկրեայ պետութիւնների դիւանագիտական ներկայացուցչութիւնների միայն այն դէպքերում, որոնք էական ներդրում են ունեցել երկու երկրների բարեկամական յարաբերութիւնների զարգացման գործում:

Իր ելոյթում Լ. Սարգսեանը խորին շնորհակալութիւն յայտնեց ՍԱՀ նախագահից իրեն նման բարձր պարգևի արժանացնելու համար: Նա իր երախտը յայտնեց ՍԱՀ բոլոր այն դէպքերում մարմիններին, որոնք հետ իրեն վիճակել է աշխատել Սիրիայում շեշտույով նրանց բարեացակամ վերաբերմունքը հայ ժողովրդի և Հայաստանի նկատմամբ: Նա ընդգծեց, որ այս բարձր պատիւ մէկ անգամ էս պարտաւորեցնում է այսուհետեւ կրկնակի եռանդով աշխատել երկու երկրների յարաբերութիւնների ամրապնդման ու խորացման ուղղութեամբ:

Վերջում Հ. Հ. դեսպանի պատիւին կազմակերպուեց ընդունելութիւն, որի ընթացքում Լ. Սարգսեանը ընդունեց ներկայների շնորհատրանքները:

Ք. Դամասկոս

28 - 12 - 2003թ.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄԵԾ ՌԻՐԱԽՈՒԹԵԱՄԲ ԸՆԴՈՒՆՈՒԵՑԱԻ ԹՈՉՆՈՅ ԲՈՅՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ

Շաբաթվերջին, Ն. Ս. Օ. Տ. Ս. Արամ Ա. կաթողիկոս, ընկերակցութեամբ միաբան հայրերու այցելեց ժիպէյլի որբանոցը՝ «Թոչնոց Բոյն», հայրական սիրով ողջունելու հայ եկեղեցւոյ հովանի վայելող գաւակները մեր ժողովուրդին: Իւրայատուկ խանդավառութեամբ որբանոցի մանուկները դիմաւորեցին իրենց հոգեւոր պետն ու հայրիկը, որ ամանորի և յառաջիկայ Ս. Մննդեան տօներուն աղօթով եկած էր աւելցնելու իրենց մանկական ուրախութիւնը:

«Թոչնոց Բոյն»-ի տնօրէն գերայ. Տ. Շահէ Մ. Վրդ. Փանոսեան, խնամակարանի անդամներ ու որբանոցի անձնակազմը բարի գալուստ մաղթեցին վեհափառ հայրապետին: Նոր Տարուան նախօրեակին կատարուող կաղանդի խրատները առաւել փայլատացաւ վեհափառ հօր ներկայութեամբ: Մանուկները իրենց ստրված երգերն ու արտասանութիւնները ներկայացուցին վեհափառ հայրապետին ու միաբան հայրերուն, գեղարուեստական յայտագրի ընթացքին, որմէ ետք մանկական յատուկ ուրախութեամբ ողջունեցին տարեկան այցելուէ՝ Կաղանդ Պապան:

Վեհափառ հայրապետը լսելէ ետք վարժարանի տնօրէն հայր սուրբին ու պատասխանատուներուն գեկուցումը տրուած խնամքին ու կատարուող աշխատանքին մասին, բարձրորէն գնահատեց հաստատութեան ներս կատար-

ԿՈՒՉՈՒՄ

«Էր բոնտիշն»-ի ներկայացուցչութիւնը վայելող ընկերութիւն մը (Արեւմտեան Պէյրութ), կարիքը ունի փորձառու թեքնիկներու, անցընողներու և նորոգողներու:

Նաեւ կ'ուզուի համակարգիչ գիտցող հաշուապահուի մը, ժամը 2:00 - 5:00 ամէն օր:

Կ'ուզուի ինքնաշարժի վարիչ մը, 30 - 40 տարեկան:

Հեռ. 01 - 372702 - 03 - 800601:



ւած բարեփոխումները և կրթական ու ընկերային կեանքի յառաջդիմութիւնը: Այս վեհափառը գրուցակից եղաւ մանուկներուն հետ, պատասխանելով անոց անմեղ հարցումներուն և լսելով անոց ապագայի հեռանկարները: Վեհափառը իր քաջալերական խօսքերէն բացի կաղանդչեքներով ուրախացուց Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան անմիջական խնամքը վայելող գաւակները մեր ազգին:

վեհափառը իր գնահատանքը յայտնեց մեր ազգի այն բոլոր գաւակներուն, որոնք ճիւրպակ ստար կը կանգնին «Թոչնոց Բոյն»-ին, որ հայ եկեղեցւոյ ընկերային ծառայութեան խօսուն արտայայտութիւններէն մէկն է: «Այս մանուկները այսօր մեր են» վարձեր բոլորին ըլլալու համար: Ազգին ու եկեղեցւոյ խնամքին կը կարօտին անոք այսօր, վարձը դառնալու համար նոյն ազգին պատիւ բերող հոգեւոր, կրթական, մշակութային ու հասարակական գործիչներ: Այս հաստատութեան օգտակար հանդիսանալու կը ճանաչուին Գրիգորի Աւետարանի ուսուցման հիմամբ Բարի Սամարացի ըլլալու գործունէութեանը մասին: Թոչնոց Բոյնի նկատմամբ մենք բոլորս պարտաւորուածք ունենանք, իրեն մեր ժողովուրդի կարօտեայ գաւակներուն ապահով ընկալարանը, ըսաւ վեհափառ հայրապետը:



Այս առիթով, արասանած իր խօսքին մէջ

ԱՆԱՆՁՆԱԿԱՆ ՌԻՐԱԽՈՒԹԻՒՆ

Կաղանդի և Ս. Մննդի տօները առաւելաբար պէտք է օգտակար դառնան բոլոր անոնց, որոնք կարօտ են գորգուրանքի և օժանդակութեան:

Մասդաշ Հոգիներուն մէջ այս գաղափարները սերմանելու համար, Երեքշաբթի, 23 Դեկտեմբեր 2003ին, Ազգ. Արգարեան վարժարանի 4րդ, 5րդ և 6րդ դասարաններուն աշակերտները իրենց ուսուցիչներու ընկերակցութեամբ ուղղուեցան զէպի ԲԱՀԼի դպրոց, ուր ԲԱՀԼի աշակերտներուն հետ հաւաքուեցան սրահ և ներկայացուցին գեղարուեստական յայտագիր մը, որ կը ըմբռնուի գեղեցիկ բանաստեղծութիւններ և երգեր: Իրենց կարգին, ԲԱՀԼի աշակերտները ներկայացուցին գեղարուեստական յայտագիր մը և արժանացան ծափահարութիւններու:

ԲԱՀԼին ետք յաջորդ հանգրուանը Ազգ. Մերանոցն էր: Հոն Արգարեանի աշակերտները դարձեալ երգեցին և ջերմացուցին մթնոլորտը:



Հիացած ու ժպտող դէմքերուն՝ մամիկները մտիկ կ'ընէին երգերուն բառերը «զանգակներ», «գիշերն իջաւ մեղմիկ լուս» և այլն: Վստահարար աշակերտներուն ներկայութիւնը մամիկներուն Հոգիներուն մէջ արթնցուց յիշատակներ, որոնք միջին զանոնք օրհնելու աշակերտները:

Թէեւ աշակերտներուն մտքին մէջ այնքան այլ յստակ չէր օրհնութեան նշանակութիւնը, բայց անոնք համոզուած էին, որ ուրախացնելու զացած էին, համոզուած էին, որ Կաղանդը միայն սեփական ուրախութիւն չէ, այլեւ՝ ուրիշներ ուրախացնելը:

Ուրիշներուն ուրախութեամբ ուրախանալը նոր փորձառութիւն մըն էր Ազգ. Արգարեան վարժարանի աշակերտներուն համար:

Հոգեկան բաւարարութիւնը՝ ստեղծուած երգով ու արտասանութեամբ, Ազգ. Արգարեան վարժարանի աշակերտները ամբողջացուցին իրենց խնայողութեամբ ապահովուած նախաճաշով՝ ծերերուն և ԲԱՀԼի աշակերտներուն:

Light @ VANLIAN lighting

VANLIAN LIGHTING s.a.r.l.
261 Armenia Street, Bourj Hammoud - P.O. Box: 80413 Bourj Hammoud, Lebanon
Tel: 01-265935, 258152 / 3, Fax: 01-265966, e-mail: vanli@franco.com.lb

1էն մինչեւ 14 տարեկան փոքրերու եւրոպական վաճառանիշերով հագուստներ

New La Giraffe NEW BOY NEW GIRL

MOMDJIAN JUNIOR

Ուրախութեամբ կը յայտնե, թէ վերաբացած է Չալքայի իր Վաճառատունը, ուր իւրաքանչիւր գնումին համաձայն կ'ընծայէ նուէր մը:

MOMDJIAN JUNIOR
Ս. մասնաճիւղ: Չալքա, Դեռ: 01-879055
Բ. մասնաճիւղ: Մար-Իլիաս, Մաքսստ կեդրոնին դիմաց
Գ. մասնաճիւղ: Սուր, Իսքրահաթ քաղ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՄԵՄԲԵՐ

ՃԱՇԿԵՐՈՅԹ ՊԱՐԱՀԱՆԴԵՍ

Երկուշաբթի, 5 Յունուար 2004ի, երեկոյեան ժամը 9:30էն սկսեալ, BIEL PAVILLON ROYAL սրահին մէջ:

ԵՐԳԱՀԱՆԴԵՍ

Երեքշաբթի, 6 Յունուար 2004, երեկոյեան ժամը 7:30ին UNESCO սրահին մէջ:

ՏՈՍՍԵՐԸ ԿԸ ՎԱՃԱՐՈՒՄ

Obelix գրախանութ, Անթիլիաս - Promenade Չալքա
Համազգայնի «Լեւոն Շանթ» կեդրոն
Համազգայնի գրախանութ
Տիւրքոթք Geka - Սթիւտիո Վաչէ, Դաճըն:

Schwarzkopf PROFESSIONAL

ՀԱՅ ԴԱՏ

ՀԱՅ ԴԱՏ

«ՄԵՆՔ ԹՈՅԼ ՉԵՆՔ ՏԱՐ ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՈՒՆ՝ ՊԱՔՈՒ ԳՏՆՈՒԵԼՈՒ»...

... Այսպես յայտարարած է վերջերս՝ այսպես կոչուած «Ղարաբաղի Ազատագրութեան Կազմակերպութեան» նախագահ ԱրթիՖ Նաղի: Այս տիրաբերական կազմակերպութիւնը արդէն բոլորիս ծանօթ է իր յաճախ կազմակերպած բողոքի ցոյցերով (Լեւոնալիմ Ղարաբաղի տագնապին վերաբերեալ), պատերազմը վերակայելու կոչերով եւ Ղարաբաղը «ազատագրելու» մասին յայտարարութիւններով:

Այս անգամ, սակայն, կազմակերպութիւնը կը բուրի շատ աւելի «վճռական» ըլլալ իր որոշումին մէջ: Նաղի վստահեցուցած է, որ Յունուարին Պարոնի մէջ տեղի ունենալիք ՕԹԱՆի «Համագործակցութեան լաւագոյն ջանքեր-2004» ռազմափորձերուն մասնակցելու համար երեւաեան եկող հայ զինուորներուն դէմ քայլեր կը պատրաստուիին...

Մինչ Ազգայնագի պաշտպանութեան նախարար Իլկար Վերտիսե վերջերս «էխօ» բերթին հետ հարցազրոյցի մը ընթացքին վստահեցուցած էր, թէ Պարոնի իշխանութիւնները պատրաստ են ստանձնելու հայ զինուորներու ապահովութիւնը, Նաղի հակառակը կը պնդէ: Սակայն Նաղիի յայտարարութիւնները գարմանալի պէտք չէ ըլլան, որովհետեւ անոնք Ազգայնագի մէջ անաբեկչական տրամադրութիւններու առաջին փաստը չեն:

Նախապէս բազմիցս յայտարարուած է, որ Ազգայնագի մէջ հաւանաբար գործած են (կամ կը գործեն) «Քալիտա» անաբեկչական կազմակերպութեան բջիջներ: Վերջերս բացայայտուեցաւ, որ «Մեծ Արեւելքի Իսլամական Մարտիկներ» բրբրական անաբեկչական կազմակերպութիւնը, որ Պոլսոյ մէջ տեղի ունեցած անաբեկչական արարքներու պատասխանատուութիւնը ստանձնեց, նաեւ գործած է Լեւոնալիմ Ղարաբաղի մէջ, հայ զինուորներուն դէմ: Կազմակերպութիւնը Լեւոնալիմ Ղարաբաղի տագնապի տարիներուն հայ զինուորներուն դէմ անաբեկչական արարքներ կազմակերպած է:

Յանար կը խօսուի նաեւ Ազգայնագի մէջ գործող կամ Ազգայնագի հետ կապեր ունեցող չեչեհ անջատողականներու մասին: Չեչեհները մէջ վերջերս ձերբակալուած զինուորական մը հաւաստեց, որ Ազգայնագի մէջ ներկայիս կը գործէ չեչեհ զինեալները ֆինանսաւորող հիւմնադրամ մը:

Եթէ «Ղարաբաղի Ազատագրութեան Կազմակերպութիւնը» րաւորապէս լաւ տեսիլ կը յայտարարէ իր անաբեկչական մտադրութիւններուն մասին, անաբեկչական այլ կազմակերպութիւններ նախապէս գաղտնի գործունեութիւն ունեցած են Ազգայնագի մէջ, յատկապէս Լեւոնալիմ Ղարաբաղի տագնապի օրերուն:

Ահաւասիկ Ուաշինկթընի համար անաբեկչութեան դէմ պայքարի «բեղուն» գործելադրամ մը՝ Ազգայնագի: Յիշեցնենք, որ Սեպտեմբեր 11ի դէպքերէն ետք Պարոն սիրաշահելու ձգտումով Ուաշինկթըն առկայեց յօդուած 907ը, որ կ'արգիլէր Ազգայնագիի նիւթական օժանդակութիւն տրամադրել (բացի մարդասիրականէն), այնքան ատեն որ վերջինս Հայաստանի դէմ իր շրջափակումը կը շարունակէր...

ՀՈՒՐԻ ՄԱՅԻՍԵԱՆ

ՄԿՈՎՏԻՈՅ ՄԵՉ ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՏԱԳՆԱԿԻ ԲԱՆԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Երկամեայ նախապատրաստական աշխատանքներէ ետք, 16 - 20 Դեկտեմբերին Սկոպտիոյ մէջ տեղի ունեցաւ Հարաւային Կովկասի խորհրդարանական նախաձեռնութեան առաջին լիազուցար նիւտը, որուն մասնակցեցան Հայաստանէն, Ազգայնագի-ճանկիցիներէն, Անոնք պէս նախապէս յայտարարուած էր, նիւտին ընթացքին արծարծուեցաւ Լեւոնալիմ Ղարաբաղի տագնապը:

22 Դեկտեմբերին Երեւանի մէջ տեղի ունեցած մամուլային ասուլիսի մը ընթացքին Հայկական պատերազմի մասին հարցազուցուեցաւ Ազգայնագիի Ժողովի փոխնախագահ Տիգրան Թորոսեան յայտնեց, որ քննարկումներուն ընթացքին կողմերը ներկայացուցած են իրենց գեղարուեստները, որոնք նախնական համաձայնութեամբ կեդրոնացած են հետեւեալ հարցերուն շուրջ՝ Լեւոնալիմ Ղարաբաղի եւ անոր յարող տարածքներուն կարգավիճակը, Երեւան-Ստեփանակերտ-Պաքու-Նախիջեան հաղորդակցութեան կարելիութիւնները, գաղթականներուն եւ տեղահանուածներուն վերադարձը, դիւանագիտական եւ տնտեսական յարաբերութիւններուն հեռանկարները:

Ըստ Տ. Թորոսեանի, Ազգայնագիի եւ Հայաստանի խորհրդարանական պատուիրակութիւնները, ինչպէս նաեւ՝ Հանրիպման նախաձեռնող բրիտանական «Լինքս» կազմակերպութեան ներկայացուցիչները, չորս օրւան տեւողութեամբ իրենց քննարկումներէն ետք ստորագրած են միացեալ յայտարարութիւն մը՝ կարեւոր նկատելով միայն Հանրիպմաններու միջոցով երկխօսութեան շարունակութիւնը: Երկու կողմերը դիտել տուած են, որ անյոյժ տագնապը մարդկային տառապանքի

պատճառ կը հանդիսանայ եւ կը խոչընդոտէ Հարաւային Կովկասի շրջանի զարգացման: Այդ պատճառով յայտարարութեան մէջ Հայկական եւ ազգրկան նախաձեռնութեան առաջին լիազուցար նիւտը, որուն մասնակցեցան Հայաստանէն, Ազգայնագի-ճանկիցիներէն, Անոնք պէս նախապէս յայտարարուած էր, նիւտին ընթացքին արծարծուեցաւ Լեւոնալիմ Ղարաբաղի տագնապը:

Երկու կողմերը յայտարարութեան մէջ ողջունած են վերջերս ժընեւի մէջ Ռոպէրթ Քոչարեանի եւ Իլհամ Ալիեւի միջեւ տեղի ունեցած Հանրիպմանի միջամտանակ կարեւոր նկատելով խորհրդարաններու դերը՝ բանակցային գործընթացին մէջ: Անոնք պատրաստակամութեամբ յայտնած են ամէն ձեւով աջակցելու Լեւոնալիմ Ղարաբաղի տագնապին լուծման ուղղուած երկու երկիրներու նախադասներու գործունէութեան:

Տագնապի լուծման գործընթացը արագացնելու նպատակով Հայկական եւ ազգայնագի-ճանկիցիներու պատուիրակութիւնները մտադրութիւն յայտնած են 2004ի ընթացքին ձեռնարկել քաղաքացիական վստահութեան վերականգնման ուղղուած միջոցառումներու՝ բրիտանական «Լինքս» կազմակերպութեան աջակցութեամբ:

Հայկական պատուիրակութեան նախագահին զնահատումով, Հանրիպմանը անցած է բաւական դրական միջոցառումներ: Այս յանձնարարութեան շրջանակներէն արագորէն Հայկական պատուիրակութեան անդամները եւս տագնապին լուծման իրենց միակ միջոց ընդունած է խաղաղ բանակցութիւնները: Ըստ Տ. Թորոսեանի, ազգայնագի-ճանկիցիները յայտարարութեան որդեգրման նախորդած քանակցու-

թիւններուն ընթացքին նախկինին համեմատ բաւական մեղմ դիրքորոշում ցուցաբերած է: Սակայն Տ. Թորոսեան յայտնեց, որ ազգայնագի-ճանկիցիները Հայկական կողմին դիրքորոշումը բնորոշած են իբրեւ բաւական կարծր:

...ԱՉՐՊԵՅՃԱՆԱԿԱՆ ԺԵՏԱԿԱՆ ԳԻՐՔՈՐՈՇՈՒՄ

Միւս կողմէ սակայն, Ազգայնագիի «էքսփրէս» լրատուամիջոցին հետ հարցազրոյցի մը ընթացքին ազգայնագի-ճանկիցիները պատուիրակութեան անդամ Մայիս Սաֆարլի յայտնած է, որ Հայկական սկզբնական այն համաձայնութեան, որ քննարկումներուն ընթացքին միայն տագնապի քաղաքական լուծումներ պիտու առաջարկուին, եւ պատմական ակնարկ տեղի պիտի չունեննայ, Հայ պատուիրակները Ղարաբաղին անդրադարձած են իբրեւ «Արցախ», ինչ որ ազգայնագի-ճանկիցի պատուիրակութեան ղեկավարները, սակայն անոնք շարունակեցին «խաբարայութիւն» ընել եւ անգամ մը եւս իրենց իսկական գոյնը ու անվստահելիութիւնը բացայայտելու, ըսած է Սաֆարլի: Ան յայտնած է, որ Հայկական կողմին այն յայտարարութիւնները, թէ «Տայքը Լեւոնալիմ Ղարաբաղ եկած են հարիւրաւոր տարիներ առաջ», աւելի զրգոտած է կացութիւնը:

Նշեցք, որ այսուհետեւ Հարաւային Կովկասի խորհրդարանական նախաձեռնութիւնը տարին երկու անգամ նիւտ պիտի գնումարէ: Ան պիտի քննարկէ շրջանի տագնապներուն, ժողովրդավարութեան, եւրոպական կառուցանքներուն մէջ Հայաստանի ներքին քաղաքական վարչարարութեան եւ տնտեսութեան վերաբերող հարցեր: 1 Յունուար 2004ին նախաձեռնութեան նախագահութիւնը պիտի ստանձնէ վարստարը, 1 Յունիսին՝ Հայաստանը, իսկ 1 Յունուար 2005ին՝ Ազգայնագի-ճանկիցիները: Այս հերթանակութեամբ իւրաքանչիւր կիսամյակի պիտի փոխուի նախագահութիւնը:

Յաջորդ լիազուցար նիւտը կը նախատեսուի զուտարել Յունիս 2004ին: Լիազուցար նիւտին իւրաքանչիւր երկիր պիտի ներկայացնէ 10 խորհրդարանական: Հայաստանի պատուիրակութիւնը բաղկացած է իշխող համաձայնական դաշինքի երեք խմբակցութիւններէ: Հանրապետական կուսակցութեան, Հ. Յ. Դաշնակցութեան եւ «Օրինաց Երկիր» կուսակցութեան երկուքական ներկայացուցիչներէ: Մնացեալ խմբակցութիւններէն եւ «ժողովրդական պատգամաւոր» պատգամաւորական խումբէն պիտի ներառուուին մէկական ներկայացուցիչներ:

Յաջորդ լիազուցար նիւտը կը նախատեսուի զուտարել Յունիս 2004ին: Լիազուցար նիւտին իւրաքանչիւր երկիր պիտի ներկայացնէ 10 խորհրդարանական: Հայաստանի պատուիրակութիւնը բաղկացած է իշխող համաձայնական դաշինքի երեք խմբակցութիւններէ: Հանրապետական կուսակցութեան, Հ. Յ. Դաշնակցութեան եւ «Օրինաց Երկիր» կուսակցութեան երկուքական ներկայացուցիչներէ: Մնացեալ խմբակցութիւններէն եւ «ժողովրդական պատգամաւոր» պատգամաւորական խումբէն պիտի ներառուուին մէկական ներկայացուցիչներ:

ԼՈՒՐԵՐ՝ ՀԱՅ ԴԱՏԵՆ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՅԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԸ ԴԵՄ ՆՈՐ ԴԱՏ

Հայկական Ցեղասպանութեան օրինական հարցերու մասնագէտ, Կլեմէնտի փաստաբան Վարդգէս Եղիայեանի գրասենեակը, 23 Դեկտեմբերին մամուլային հաղորդագրութեամբ մը յայտնեց, որ Հայկական Ցեղասպանութեան գոհերուն հարազատները նոր դատ մը բացած են «Վիթթորիա» ապահովագրութեան ընկերութեան դէմ, որ 1880-1915 տարիներուն Օսմանեան կայսրութեան տարածքին բնակող բազմաթիւ հայերու ապահովագրական պայմանագիր վաճառած է: Դատը ստանձնած է փաստաբան Վարդգէս Եղիայեանի գրասենեակը, որ Հայկական Ցեղասպանութեան գոհերուն հարազատները կը ներկայացնէ նաեւ այլ դատերու մէջ, ինչպէս «Նիւ Եորք Լայֆ» եւ «Աքսոս» ապահովագրական ընկերութիւններուն դէմ բացուած դատերուն պարագային:

«Եւրոլ 90 տարիէ ի վեր «Վիթթորիա» ապահովագրական ընկերութիւնը կը պահէ միլիոնաւոր տուարներ, որոնք կը պատկանին Հայկական Ցեղասպանութեան գոհերու ժառանգորդներուն: Ոչ մէկ կազմակերպութեան պէտք է թոյլ տրուի ցեղասպանութեան շահ ապահովել, սակայն մինչեւ օրս «Վիթթորիա» շարժառիթ չունէր ճանչնալու իրաւական ժառանգորդները եւ անոնց զուտարելը վերադարձնելու: Այս դաշնակցային դատավարութեան միջոցով մտադիր ենք անոնց շարժառիթ մը տալ եւ Հայկական Ցեղասպանութեան գոհերուն համար արդարութիւն իրազօրծել», յայտնած է փաստաբան Եղիայեան:

ԳԵՐՄԱՆԱ

«ԱՊՐԵԼ 24» ԱՆՈՒՆՈՎ ՆՈՐԱՍԵՂՉ ԅԱՆՁՆԱՆՈՒՄԸ
«Երկիր» կը տեղեկացնէ, որ Գերմանիոյ Հայոց առաջնորդարանը եւ գերմանահայ կեդրոնական խորհուրդը Հայկական տարրեր կ'աջակցութիւններուն հարցեր երկիրներուն համար կ'աջակցութիւններուն կողմնակցելու «Ապրիլ 24» նորաստեղծ յանձնախումբին հետ:

Յանձնախումբի առաջին նիւտին ընթացքին, որ տեղի ունեցած է 23 Դեկտեմբերին Գերմանիոյ մէջ, յանձ-

նախումբին անդամները իրենց գլխաւոր նպատակը նկատած են կազմակերպել եւ համադրել Հայկական Ցեղասպանութեան ողբերգման եւ ճանաչման աշխատանքները թէ՛ Գերմանիոյ եւ թէ՛ եւրոպական այլ երկիրներուն մէջ: Անոնք կարեւոր նկատած են նաեւ ոչ Հայկական շրջանակներու մէջ աշխուժ գործունէութեան ծաւալումը:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱՆՈՒՄԸ

ՀԱՆԳԻՊՈՒՄ ՈՒԺԱՆԻԹԻ ԵՄԵՆԱՐԱՐԻՆ ՀԵՏ
Միացեալ Նահանգներու Հայ Դատի Ցանձնախումբը կը տեղեկացնէ, թէ յանձնախումբի գործադիր տնօրէն Արամ Համբարեան եւ Միշիկընի Հայկական համայնքի արթիվիսթ Չաք Եսայեան վերջերս Հանրիպման մը ունեցած են ամերիկեան ուժանիւթի նախարար Աֆէնսըր Ապրահամի հետ: Հանդիպումին ընթացքին արծարծուած են ամերիկահայութիւնը շահագրգռող հարցեր: Հանդիպումը տեղի ունեցած է արաբեամբերիկեան հիմնարկի ազգային ղեկավարութեան խորհրդաժողովի ընթացքին: Երեք օրուան տեւողութեամբ խորհրդաժողովին ընթացքին ի միջի այլոց խօսք առած են նախագահական ինը դեմոկրատ թեկնածուներէն ութնէ մը Պոլլ - Չէյնի 2004 տարուան ընտրարշաւի նախագահ Մարք Ռասիթը:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԹՈՒՐԻՔՈՅ ՄԵՉ ԱՊՐՈՂ ՀԱՅԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Պոլսոյ մէջ թրքերէնով լոյս տեսած է պոլսահայ լրագրող եւ հրատարակագիր Լեւոն Փանոս Տապաղեանի նոր աշխատութիւնը՝ Թուրքիոյ մէջ ապրող հայերու մասին:

Ըստ «Մարմարա»ի, մօտ 800 էջնոց աշխատութեան մէջ հեղինակը լայն տեղեկութիւններ տուած է Հայոց պատմութեան մասին, ապա անդրադարձած է Թուրքիոյ մէջ գտնուող Հայկական հաստատութիւններուն ներկայացնելով երկրին մէջ գոյութիւն ունեցած կամ մինչեւ այժմ գործող Հայկական եկեղեցիներ, դպրոցներ, հիւանդանոցներ, որբանոցի, մամուլի, պատերազմարանի, Հայ կաթողիկէ համայնքի առաջնորդարանի եւ այլ հաստատութիւններու պատմականը:

ԶՈՅԳ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ՝ «ՂԱՐԱԲԱՂԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵՆԵՆ»

Ազգայնագի-ճանկիցի ապսպէս կողմէ «Ղարաբաղի ազատագրութեան կազմակերպութիւնը» վերջերս «վերջնագիր» ներկայացուցած է երկրի կառավարութեան եւ միջազգային կազմակերպութիւններուն՝ յայտարարելով, որ հինգ ամսուան պայմանագրով կը ճշդէ, որ վերջիններս կարճ ժամանակի մը ընթացքին դրական արդիւնքներու հասնին՝ Ազգայնագի «բռնագրաւուած» տարածքները ազատագրելու ուղղութեամբ: Կազմակերպութիւնը հինգ ամսուան պայմանագրով ճշդած է պարագայէս «այն պատճառով, որ Ազգայնագի մէջ իշխանութիւնը նոր է եւ ժամանակի պէտք ունի»:

Ըստ ազգայնագի-ճանկիցի «էխօ» թերթին, կազմակերպութիւնը պահանջած է հայ-ազգայնագի-ճանկիցիներու սահմանադիր լոյս միջազգային խաղաղարար ուժեր տեղադրել եւ յայտարարած է, որ միջազգային հանրութիւնը Հայաստանը պէտք է ճանչնայ իբրեւ «յարձակող պաշտ» երկիր: Կազմակերպութիւնը պահանջած է նաեւ, որ ազգայնագի-ճանկիցիները իշխանութիւնները հրաժարին ԵԱՀԿ Մինսքի խմբակի միջնորդական ծառայութիւններէն եւ խզեն Հայաստանի հետ բոլոր կապերը պաշտօնական եւ ոչ պաշտօնական մակարակներու վրայ: Կազմակերպութիւնը դիտել տուած է, որ դարաբաղեան տագնապի խաղաղ լուծման ջանքերուն ձախողութեան պարագային, Ազգայնագի կառավարութիւնը կ'ամ պէտք է ընտրէ ինդիքի լուծման գիտնական տարբերակ կամ այլ հրաժարական տայ:

Կազմակերպութեան ղեկավար ԱրթիՖ Նաղիի համաձայն, եթէ մինչեւ 2004ի Մայիսը յիշեալ պահանջները չկատարուին, այդ մէջ կը ընկնան, որ ազգայնագի-ճանկիցիները իշխանութիւնները եւ միջազգային կազմակերպութիւնները չեն փափաքիր լուծել զարաբաղեան հարցը: Այդ պարագային կազմակերպութիւնը պիտի դիմէ «որոշակի միջոցներու», որուն առաջին քայլը առնչուած պիտի ըլլայ Շուշիի «գրաւման տարեդարձ»ին: Արդարեւ, 8 Մայիս 2004ին կազմակերպութիւնը եւ թաղարար ոչ պիտի Ղարաբաղ համազգայնագի-ճանկիցիներէն քայլաքայլ մը պիտի կազմակերպէ: Նաղի նշած է, որ երթի մասնակցներուն վրայ չ'ազգայնագի Հայկական գործերուն հետ բախումներ ունենայու հեռանկարը: «Եթէ իշխանութիւնները չգործեն, մենք պիտի երթանք Ղարաբաղ եւ թող Հայերը մեզ ոչնչացնեն», ըսած է Նաղի:

ՊԱՔՈՒՒ ՄԵՉ ԿԸ ՍՊԱՌՆԱՆ ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆՆԵՐՈՒՆ

Յունուարին, Պաքուի մէջ տեղի պիտի ունենայ ՕԹԱՆի «Համագործակցութեան լաւագոյն ջանքեր-2004» ռազմափորձի նախապատրաստական աշխատանքներուն նախնական քննարկումը, որուն պիտի մասնակցին նաեւ Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան ներկայացուցիչները: Այս ռազմափորձերուն հայկական միաւորներուն մասնակցութեան հարցը կախեալ է այն հանգամանքէն, թէ ինչպէս զանոնք պիտի ընդունին Պաքուի մէջ:

«Փանարմինիւն» կայքէջը կը տեղեկացնէ, թէ Պաքուի մէջ Հայ զինուորականներու հասցէին ուղղուած սպառնալիքներ հնչած են: Անոնք մէջ ամէնէն արմատականը «Ղարաբաղի ազատագրութեան կազմակերպութեան» յայտարարութիւններն են: Կազմակերպութեան առաջնորդ ԱրթիՖ Նաղի վերջերս յայտարարեց, որ Երեւանէն եկող զինուորներու նկատմամբ քայլեր կը նախապատրաստուին: «Մենք թոյլ չենք տար Հայ զինուորներուն Պաքու գտնուելու», յայտնեց ան լրագրողներուն՝ աւելցնելով, որ «վաղը, երբ այդ արմատական գործողութիւնները կեանքի կոչուին, կատարուածին պատասխանատուութիւնը կ'ընկնայ ՄԱԿի Ապահովութեան ինքնուրուի անդամ պետութիւններու ուսերուն»:

Նոյնանման կոչով Հանդէս գալով՝ Ազգայնագի-ճանկիցի «Նիւ Ազգայնագի» կուսակցութեան պատգամաւոր Ասիա Մանաֆով յայտարարեց. «Մենք պատրաստ ենք նոյնիսկ կիրարկել չեչեհ սպատամբներու ռազմավարութիւնը, տյսինքն՝ դիմել անձնասպանական արարքներու», փաստացիորէն կոչ ուղղելով դիմել անաբեկչութեան:

Ցատկանշակաւ է, որ Ազգայնագի պաշտօնական մարմինները, մասնաւորապէս՝ իրաւապաշտպան մարմինները եւ յատուկ սպասարկութիւնները երբեք չեն արձագանգած այս յայտարարութիւններուն:

Fatto Ceramica
 ԿԸ ԸՄՐԷՎԱՌԵՆԻ ԼԻՐԱՄԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՏԱՐԻՆ ԵՒ ՍՈՒՐԵ ԾԱՄԱՌԸ
 Zalka, Cite Mousa Tel: 01 - 885168
 Beirut, Hammoud Rue Marash Tel: 01 - 260299
 SOLDERIE Cite Industrielle Tel: 01 - 497910
 Beirut, Cite Industrielle Tel: 01 - 497910
 Fax: 01 - 888088, R.P. 80278
 Beyrouth - Liban

ՎԱՐՁՈՒ ԽԱՆՈՒԹ

●Պոլոճ Համուտի մէջ, հեռ.՝ 04-414612 երեկոյեան ժամը 6:00էն ետք:

D.T.C sarl - NEC SILVER

29" TRUE FLAT TV WITH DVD PLAYER

SF-D2929TS

Stay Home, and Explore the World!

SF-D2121TS

SILVER

(CARLO DEMIRJIAN) TV-VIDEO EQUIPMENT ZAKA Highway-AMARAT CHALHOUB HIGHWAY CENTER BLDG. PHONE/FAX: 01-892853

LA PIARA

Poitrine de Dinde

Produit naturel

99% FAT FREE

Mangez bien, Mangez sain

www.hamazkayin.com

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5625
Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10
1									
2									
3									
4									
5									
6									
7									
8									
9									
10									

- | | |
|--|--|
| <p>ԸՆԴՈՒՆԱԿԱՆ</p> <ol style="list-style-type: none"> Ամբակառոյց: Հետեւաբար - Ծառի կոճղ: Մահիճի գլխակողմ - Հատիկ: Պիտանի տեղեկութիւն: Նմանապէս - Այրուրենէն - Կրկնուած ձայնաւորներ: Տոպրակ - Դազազ: Լեզուով մը՝ այր՝ - Իմաստակ: Հայաստանի գետերուն - Միջնաբերդ: Միրանաւոր, լատին եկեղեցու իշխանաւոր: Համեմէ՝ - Աւնչուրթիւն - Ստեղծուածներ: | <p>ՈՒՂԱԿԱՆՅԵԱՑ</p> <ol style="list-style-type: none"> Ձիւնախառն քամի - Դիմացիլ: Սեփականութիւն - Բաժնի երկերէն՝ «Ոսկի...»: Կորովաբիբ - Ուոզգէ՛: Սաղարթազարդ: Տարի - Արական օտար անուն - Փոքրացնող մասնիկ: Աղբատէր ճճի - Քրիստոս հոն հարսնետէր էր: Գոհարազարդ: Սուրիական լրատու ղործակալութիւն - Ասիական ծով: Գրկից տառեր - Արժէքի կէտ: Էգ ոչխար - Անտէր: |
|--|--|

ԹԻՒ 5624

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Ճ	Ի	Տ	Ա	Կ	Ա	Շ	Խ	Ե	Տ
2	Օ	Ր	Ա	Կ	Ա	Ր	Գ	Ո	Ր	Ի
3	Շ	Ա	Ր	Ա	Տ	Ա	Ս	Պ	Ա	Ր
4	Ա	Պ	Ա	Տ	Օ	Պ	Ա	Ն	Ն	Գ
5	Ն	Ա	Ջ	Ի	Լ	Ի	Ն	Ն	Գ	
6	Շ	Ր	Ո	Ք	Շ	Ք	Ա			
7	Ո	Տ	Ք	Գ	Ա	Ղ	Ա	Է	Ժ	
8	Ս	Ա	Ղ	Ա	Ր	Ո	Ն	Ա	Ա	
9	Տ	Ո	Մ	Ա	Ր	Ս	Ա	Կ	Ն	
10	Ռ	Ա	Մ	Ա	Տ	Ա	Ն	Ա		
11	Ա	Ն	Կ	Ա	Ն	Ն	Ա	Խ	Ն	Ի

ար
գր

bezdig_mezdig@hotmail.com

ՍԱԿԱՐԱՆ

Պէյրուքի սակարանին մէջ օտար դրամահիշներու փակման սակագները հետեւեալներն էին երէկ.

Սուրիական քղթուկի	28,70 - 28,95 լ.ն.
Քուէթեան տինար	5110,00 - 5135,00 լ.ն.
Յորդանանեան տինար	2120,00 - 2130,00 լ.ն.
Պահրէյնեան տինար	3985,00 - 4010,00 լ.ն.
Ա.Մ. Էմիրութեան տինար	410,75 - 412,75 լ.ն.
Քաթարեան ռիալ	413,75 - 415,75 լ.ն.
Սէյուական ռիալ	402,00 - 404,00 լ.ն.
Օմանեան ռիալ	3895,00 - 3920,00 լ.ն.
Եգիպտական կինէ	220,00 - 230,00 լ.ն.
Անգլիական սթրլին	2675,00 - 2685,00 լ.ն.
Չուիցերիական ֆրանք	1204,00 - 1209,00 լ.ն.
Թրքական լիրա	106,00 - 106,50 լ.ն.
Կիպրական փաուստ	3200,00 - 3225,00 լ.ն.
Ճափոնական հալար եէն	13,95 - 14,05 լ.ն.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1515,00 լ.ն.
Քանադական տոլար	1147,00 - 1152,00 լ.ն.
Աւստրալիական տոլար	1115,00 - 1120,00 լ.ն.
Եւրո	1880,00 - 1890,00 լ.ն.

● ՈՍԿԻ

Անգլիական մէկ ոսկի	158,500 - 163,500 լ.ն.
Իրանեան մէկ ոսկի	144,000 - 149,000 լ.ն.
Օմանեան մէկ ոսկի	133,000 - 138,000 լ.ն.
Մեքսիկական փէսոս	764,000 - 784,000 լ.ն.
Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի	19,950,000 - 20,150,000 լ.ն.
Մէկ օնս ոսկի	414,40 - 414,90 \$
Մէկ օնս արծաթ	5,85 - 5,87 \$

● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.

Եւրո	1.2485 - 1.2490
Քանադական տոլար	1.3097 - 1.3102
Չուիցերիական ֆրանք	1.2485 - 1.2490
Ճափոնական եէն	106.90 - 106.95
Մէկ սթրլին	1.7750 - 1.7755

Մէկ քոլար 570 դրամ

● ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ

ԳԻՆԻ Ա. ճշդում ԳԻՆԻ Բ. ճշդում

Ա. կարգ	-
Բ. կարգ	-

ԼՈՒՄԱՅԱՓՈՒ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ ՀԵՌ. 01-252852

☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

ԽՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ)
Անակնկալ հիւրեր պիտի դիմաւորէք արտասահմանէն: Ձեր ուրախութիւնը պիտի կրկնապատկուի, որովհետեւ շատոց չէիք տեսած գիրար: Ձեր նուերները բազմացուցէք...

ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս)
Եթէ անձ մը ձեզի մօտեցնայ եւ ձեզ ողորկ տօնական այս օրուան նախօրեակին, մի՛ հաւատար. պարզապէս շողորորք մըն է եւ կ'ուզէ ձեզմէ բան մը փրցնել՝ ապաւինելով ձեր բարի սրտին:

ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս)
Աւարտեցէք ձեր ստանձնած պարտականութիւնը: Հին օրերէն գործ մի՛ ձգէք Նոր Տարուան առաջին օրերուն, որպէսզի հանգիստ եւ խաղաղ մտքով ու սրտով բաժակ պարպէք ձեր սիրելիներուն հետ:

ԽԵՑԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս)
Մի՛ դժգոհիք, որ լուր չէք ստացած հեռու աշխարհ ապրող ձեր սիրելիէն: Առածը կ'ըզէ. «Լաւ լուրերը կաղալով կու գան, իսկ չար լուրերը վազելով»: Ուրեմն հանգստացուցէք ձեր միտքը:

ԱՌԻԻՎ (24 Յուլիսէն 23 Օգոստոս)
Ներեցէք այն մարդոց, որոնք անցնող տարեշրջանին ներդրութիւն պատճառեցին ձեզի: Նոր Տարին դիմաւորեցէք անկշարտութեամբ: Աստուած կ'օգնէ մարդը սրտով մարդոց:

ԿՈՅՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)
Ձբաղեցէք ձեր գաւակներով, գոհացուցէք անոց պահանջները, որովհետեւ Նոր Տարին մանուկներուն տօնն է առաւելաբար: Այսուհանդերձ մի՛ մոռնաք ձեր տարեց հարգատները:

ԿՇԻՌ-Բ (24 Սեպտեմբերէն 23 Նոյեմբեր)
Բախտը երբեմն կը բախէ մեր տան դուռը: Այսօր պատրաստ եղէք բաց ձեզի ու ձեր դուռը, որպէսզի բախտը ներս մտնէ հարագատի անկեղծութեամբ եւ առանց հրաշքի: Ձեր աստղը պիտի փայլի այսօր:

ԿԱՐԻՃ (24 Նոյեմբերէն 23 Դեկտեմբեր)
Մէկ կողմ դրէք մանր-մունր հոգերը, որոնց մասին մտածելը չ'արժէք: Յարգեցէք ձեր խոստումը վերաբերելով ձեր պարտքի վերջին մասնավաճարը: Միւս կողմէ, բարի լուր մը պիտի ուրախացնէ ձեզ:

ԱՂԵՂՆԱԻՌ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)
Օրը գեղեցիկ է. պիտի փայլի ձեր վայելչութեամբ: Նոյնպէս պիտի համայնք ձեզ դիտողները: Ձեր կարգին եղէք վեհանձն եւ առատածն:

ԱՅՅԵՂՁԻԻՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)
Մի՛ մտածէք վաղուան մասին: Կաղանդը բախտաբեր պիտի ըլլայ ձեր նկատմամբ: Ժպտացէք կեանքին, որպէսզի ան ալ ժպտի ձեզի: Զէ՛ որ ամէն ինչ փոխադարձ է...

ԾՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարէն 19 Փետրուար)
Օգտուած էք վերջին օրերուն ձեր կիրարկած սննդականոնէն: Ուրեմն շարունակեցէք նոյն ձեւով: Կաղանդը պատճառ մը չըլլայ շատակերութեան: Ուշադիր եղէք:

ՁՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)
Ձեր պատրաստած խորտիկները եւ համադամ նաշերը պիտի գնահատուին: Թէեւ յոգնած էք, բայց շատերուն գնահատանքը լսելով՝ պիտի մոռնաք յոգնութիւնը: Նաեւ աղուոր ընծայի մը պիտի արժանանաք:

ՕՐԱՏԵՏՐ

ԽԱՂԱՎԱՅՐ / ՅՈՒՅՆԱԿԱՆ ԳԼԵՍ / ԵՐԳ

ՓԻԹԸՐ ՓԷՆԻ ԱՇԽԱՐՀԸ ԼԻՔԱՆԱՆՑԻ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Մինչ Նոր Տարուան արձակուրդին մանուկներուն մեծամասնութիւնը նոր խաղալիքներով հաճելի ժամեր կ'անցընէ տան մէջ, «Տիւն» կեդրոնը առիթ կ'ընծայէ ձեր օրերուն տունէն դուրս ծամանցի հաճելի պահեր ունենալու:

Նաեւ կ'աշխատէ մագլցի, պարաններով սանդուխներէ վեր բարձրանալ ու վար իջնել, հնամենի թնդանօթներով կերպրնկալէ գունդեր արձակել եւ զանձերու փնտրութիւնը ձեռնարկելու մէջ կորսուիլ... Վստահաբար բոլոր մանուկները պիտի ուզէին սպորտալիքներով վերտանի րակաւ նման պահեր:



Անկիւն մը՝ Փիթըր Փենի աշխարհէն

Մանկապատանեկան գրականութեան եւ շարժապատկերի գիտատիր հերոսներէն Փիթըր Փենի նուիրումը նոր ծափաւէնին՝ «Փիթըր Փեն. տը ֆիլմ»ի քարոզչութիւնը կատարելու նպատակով վերտանի «Տիւն» կեդրոնին մէջ կառուցուած է Փիթըր կան գրականութեան եւ շարժապատկերի գիտատիր հերոսներէն Փիթըր Փենի նուիրումը նոր ծափաւէնին՝ «Փիթըր Փեն. տը ֆիլմ»ի քարոզչութիւնը կատարելու նպատակով վերտանի «Տիւն» կեդրոնին մէջ կառուցուած է Փիթըր

Փենի աշխարհը՝ իր արկածախնդրու թիւններով ու հետաքրքրական ծամանցներով: Կեդրոնին մէջ կառուցուած է Նելլըրիէնտի կախարդական աշխարհը, ուր այցելուները կը դիմաւորեն հեքիաթին գիտատիր կերպարները, որոնք իրենց հիւրերը կը պարզեցնեն նոր ծափաւէնին, անոր կերպարներէն եւ միջնորդէն ներքնուած խաղերով:

3 - 13 տարեկան մանուկներու եւ պատանիներու համար պատրաստուած խաղերը մեծ մասամբ արի են: Փիթըր Փենի այս աշխարհը կարելի է մուտք գործել ամէն օր, կէսօրուան ժամը 2:30էն մինչեւ իրիկուան ժամը 8:30, մինչեւ 3 Յունուար, իսկ մինչեւ 7 Փետրուար՝ շաբաթավերջերուն:

ԱՅՍՈՐ

- Նուագահանդէս՝ կիրառահար Աստուր Քիրիչեանի ելույթ, ՍԷՏ Ժողովք համալսարանի «Փ. Ապու Խաթըր» սրահ, ժամը 20:00ին:

- Մանուկներու խաղաղալիք Փիթըր Փենի աշխարհը, «Տիւն» կեդրոն, մինչեւ 3 Յունուար, կէսօրուան ժամը 2:30էն մինչեւ իրիկուան ժամը 8:30:

- Նկարչական հաւաքական ցուցահանդէս՝ «Կրանտ Ժ. Ժեռ», «Փանիկ Ռուպէլ» ցուցասրահ, մինչեւ 31 Դեկտեմբեր:

- Նկարչական հաւաքական ցուցահանդէս՝ «Սըր-սըր» Թանգարանի «Աշնանային սալոն» ցուցասրահին մէջ, մինչեւ 17 Յունուար:

- Նկարչական ցուցահանդէս՝ «Քիւլ պիւք», Քրիս Սերաֆին - Լէյնի գործերը, «Ֆընել» ցուցասրահ, մինչեւ 7 Յունուար:

- Թատրոն՝ «Քամա ալա արտ, քաղալիք մին... ֆաուր», ժամը 20:30ին, «Քաղցի սիւ Լիպան», մինչեւ 29 Փետրուար:

- Լուսանկարչական ցուցահանդէս՝ «Պարսելու-նա՝ գգացումներու քաղաք» խորագիրով «Սերվան-բէս» հիմնարկին մէջ, Մարտտ փողոց մինչեւ 6 Յունուար, ժամը 13:00էն 20:00, բացի Կիրակի օրերէն:

- Նկարչական հաւաքական ցուցահանդէս՝ «Սերուրեկ Սերուրեկ» խորագիրով, «Փանիկ Ռուպէլ» ցուցասրահին մէջ, մինչեւ 31 Դեկտեմբեր:

ՕՂԵՐԵՒՈՅԹ

ԵՐԵՎԱՆԻ, 30 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2003

ՊԵՅՐՈՒԹ ՄԱՍԱՐԱ ԱՄՈՏՏ

ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ ՅԵՐԵՎ՝ 19°C

ԳԻՇԵՐ՝ 12°C

ԽՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝ 63%

ԱՉԳԱԿ 50 ՏԱՐԻ ԱՄՈՒՄ

30 Դեկտեմբեր 1953

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԳՆԱԴՐԸ

Մօտ երեք ամիս է վեր, Պէյրուք էլեկտրական անջախը բաց տագնապի մը մէջ է: Թօսակցութեան միակ միւր զարծած է լոյսի խնդիրը, որ անմիջական կ'ապուրէ բնակչութեան կեանքին հետ:

Այս տագնապը, մանաւանդ ձմեռային ստեղծած է մայրաքաղաքին մէջ: Դժգոհութիւնը խոր է եւ ընդհանուր, մանաւանդ անոր համար, որ ցարդ տագնապը լուծելու համար արմատական որեւէ միջոց ձեռք չ'առնուեցան թէ՛ իշխանութիւններուն եւ թէ՛ էլեկտրական ընկերութեան կողմէ:

Ո՞վ է պատասխանատուն, կը հարցադրեն իրաւանեան թերթերը եւ գաւազան հաստատումներ կը կատարեն: Կարելոյը, սակայն, պատասխանատուներ փնտրելը չէ, այլ կարելի եղածին չափ շուտով, որեւէ միջոցով վերջ տալ այս տագնապին, որ կրնայ աղետալի վիճակ մը ստեղծել էրկրին մէջ:

Էլեկտրական հոսանքի չզոյրութեան ամէնէն աւելի կը տուժէ քաղաքային տարածքները, որ երկրին եկամուտին գլխաւոր աղբիւրներէն մէկը կը հանդիսանայ: Այս անկիւնէն մօտեցալով հարցին, էլեկտրականութեան տագնապը իր ամէնէն սուր հանգամանքին մէջ կը ներկայանայ եւ հանրային իշխանութիւնները կը դնեն շուտափոյթ զարման մը գտնելու հարկադրանքին տակ: Որովհետեւ, թէեւ հանելի չէ առանց լոյսի մնալ տունը եւ վերադառնալ քարիւղավառ լապտերներու հնամենայ միջոցին, բայց ատիկա ձեւով մը տանելի է, երբ ստիպողականութիւն կայ: Սակայն նարտարարուեստին մարզին մէջ հանելի կամ ոչ հանելի խնդիր չկայ այլեւս, այլ շահու եւ վնասի: Իւրաքանչիւր վայրկեան, որ էլեկտրական հոսանքը կը կտրուի, մեքենաները կը կեանք եւ այսպէս, վայրկեանները իրարու վրայ բարդուելով, մեծ վնասներու կ'երթարկեն քաղաքային տեսական հաստատութիւնները:

Կարելոյը այն չէ, թէ տագնապը ի՞նչ ձեւով պիտի լուծուի: Կառավարութիւնը իր միջոցներով պիտի հոգայ յաւելեալ հոսանքի հայթայթումը՝ զիմեղով մասնաւոր ընկերութիւններու կամ էլեկտրականութիւն հայթայթող մեքենաներ գնելով, թէ էլեկտրական ընկերութիւնը՝ իր պատատուութիւնները յարգելով, պիտի զարմացնէ:

Կարելոյը էլեկտրականութիւն ունեցող է: Ինչ ձեւով ալ ըլլայ: Էլեկտրական հոսանքը այնպիսի անհրաժեշտութիւն մըն է մեքենական ներկայ դարուն համար, որ կարելի չէ երկմտիլ եւ վարձակալ: Այլապէս երկրին տնտեսական կեանքը կը վտանգուի եւ ծանր բարդութիւններ կրնան յառաջ գալ:

Տարակոյս չկայ, որ երկրին էլեկտրականութեան տագնապը եւ ոգի ի բոլին կ'աշխարհի իշխանութիւնները կը դնեն շուտափոյթ զարման մը գտնելու համար: Ժողովները իրարու կը յաջորդեն եւ կտրուական գաղափարներով իրարու դիմադրանք կը հանդիսանան հոսանքի պակասը:


(ՀԱՏՈՒԱԾ)

Armenian
Rhythms *Of The* Soul
vibrations

A MONUMENTAL COMPILATION

Over 150 Armenian Artists

Emotions



DUDUK


The Sacred Cosmos



LITURGY

Harmony

Free Will



QCTET


Inner Beauty

Unconditional Love




JAZZ

Eternal Spirit



FOLK DANCES



A CAPPELLA



CHILDREN



Djivan Gasparian
The Malkhassian Trio
Chico Armen Tutunjian & Friends
Armenian Jazz Band - Armen Martirosian
Funky Brass - Arsen Nersessian Jazz Band
Shoghakn Ensemble - The Karen Gasparian Trio

Yerevan Chamber Choir - Little Singers of Armenia
Armenian State Radio & TV Chamber Choir
Yerevan Women's Choir of Armenia
Anna Mailian - Lousnak
Varoujan Margarian
Hye Folk



For Free Delivery
04. 405 496 - 03. 523 743

info@ycigroup.com


Sponsored by

GAS

G. AYANIAN & SONS



A New Vision For Business



Y graphics

Filming - Scanning
Proofing - Layouts

Created by



Produced by

PAN ARMENIAN BUSINESS
.com